

այնքան քաղաքակրթութեանց տախտակներ կը պարզեն Փոքր Ասիոյ քիչ մը ամէն կողմը, անցք մը բաւ էր այդ արհամարհուած, գերեզմար ցեղին կնիքը հաստատելու ամէն տեղ: Ներկայանալի, արդիական մա^օսը տաճկական քաղաքներուն: Գաղտնիք մը չէ ատիկա: Ու այս ամէնը՝ ահին ու բռնութեան ու թաթին տակը ցեղային նախանձին,- Արեւելքը աւերող մեծագոյն ախտը, հազարամերէի վեր: Շինարար ցե^ղ: Նոր չէ այդ տիտղոսը: Դժբախտ ցեղ: Ա՛տ ալ նոր չէ: Ճանչնալ այդ ժողովուրդը, ականատես ու ամբողջ, թուրքերէն գրաւուած ընդարձակ հողամասին մէջ,- ահա՛ իր ծրագիրը, որ հասունցաւ իր մէջ Կիլիկիա հանող ճամբուն ընթացքին:

Ընկեր Մաթիկ մտածել կ'ախորժէր, երբ նիւթ ունենար: Անիկա խորունկ վերլուծումով մը ծանրացաւ այն անգիտութեան, որուն մէջ թաղուած կ'ապրէին Թիֆլիսի տեսաբանները: Իր կարծիքով՝ յառաջագէժ ընկերվարութիւնը ու մեր պատմական պահպանողականութիւնը անբաւական էին մեր ժողովուրդին կարիքներուն: Սեփական հայրենիքի մտապատկերը, որ շարժումին վարիչներուն համար հեռու էր անխառն ըլլալէ, չէր բաւեր բանաձեւերու վստահիւ: Ահաւոր աշխատանք, անհաշուելի զոհողութիւն կապուած էին անոր իրականացման: Ու այդ ամէնը ինքն իր մէջ, այսինքն՝ միակ մեր ու իրականացման: Ու այդ ամէնը ինքն իր մէջ, այսինքն՝ թուրքին ճակատովը, առանց մեծերու միջամտումին: Ընկերվարութիւնը, մեր ցեղային բնագոյն վրայ իր թուլացուցիչ ներգործութեամբը, վտանգաւոր ազդեակ մըն էր, կարող՝ մեզ տկարացնելու մեր հոգեկան լարումէն, որ մեզ ինքնացնող, անջատող ոլորտ մը կը պարզեւէր մեր ներքին հոլովոյթին եւ որուն արդիւնքն էին իր աչքերէն հաստատուած սա քիչ-շատ հանդուրժելի կղզիացումը, իրեն յարակից ներքին, հոգեկան ճոխ բարգաւաճումով ու արտաքին կիսակիրթ պայմաններու հանդէպ, երկրի մը մէջ, ուր մշակոյթը - իր խստագոյն լաստակերտումին մէջտեղ մզկիթի մը գարգմանակուած գմբէթովը կը ներ-